8, ՄԵՐԿԵԶԵՐ

Էարգեազար կամ Մերկեզեր քանի մի ձորահովիտներէ կազմուած մի միւտիւրութիւն (գլավայ) է, որ բռնած է Զամչայ և Աղթայ լեռներու հարաւային երեսն, մինչև ի դաշտ Աշխալի և երկու ցառապի գիւղերու սահմանը 5—6 ժամ զառիվայր մի. իսկ լայնութիւնը, որ Ամատ գիւղի 3 ժամ հիւսիսէն կսկսի, յարևելս մինչև Ճեամի—Զաթոյ գիւղն, որ Աղթի Ջրի (Աղտից ձոր [1]) վերայ է, նոյնպէս 6—7 ժամ լայնութիւն ունի:

---

1. «Աղտից ձորը» լինելու է պատմագրոց ցոյց տուած:

«Գնացեալ սոցա (Դաւիթ կիւրապաղատ զօրօք) ի լեառն Սուկաւ ի ձորն Աղտից, պահէին զառաջս պարսից»:

Աղթայի ձորն Սուկաւէտից 10—12 ժամ յարեւելս մերձ Սինէկ լերան մի ամենաապահով կիրճ է, այդ տեղ լինելու է Աղտից ձորն, որ եւ նպատից եւս շատ հեռի չընկնիր, Սուկաւէտի յարեւելս՝ որոյ շարունակութեան վերայ լինելուն, նաեւ Ջրաբաշխի շրթային վերայ գտնուելուն թերեւս «ի լեառն Սուկաւ» ասուած կըլինի: